

տրուած է այսպէս՝ փոքրաթիւ տարիներու ընթացքին տիրանալ արդար փառքի մը ծաղիկներուն, որովհետեւ, տիկնայք եւ տեարք, Վարուժան բազմակողմանի տաղանդ մըն է: Անոր գործը իր մէջ կ'ընդգրկէ անցաւորն ու անանցը, միտքը՝ զգացման հետ, գեղեցկութեան արուեստը եւ արուեստին գեղեցկութիւնը:

Ծնած Փոքր Հայքի մէջ, Վենետիկը կ'ըլլայ՝ Պոլսէն յետոյ, պատենեկան առաջին ներշնչումներուն օրրանը: Վենետիկ՝ ջրանցքներու թագուհին՝ էն ինքնատիպն է Եւրոպայի քաղաքներուն. միայթիքական եւ կենսապաշտ քաղաք՝ ուր եկեղեցական արուեստին առընթեր կը հանգչի հեթանոսականը. հոն են վերածնունդի վարպետներէն Թիցիանոն, Վերոնեզը, Ճիովանի Պելլիսին եւ ուրիշներ՝ որոնք քրիստոնէական կտաւին քով հեթանոսական Յունաստանի մերկութիւնը կ'ոգեկոչեն:

Հոգի մը զարգացնելու համար ինչքա՛ն արուեստ կայ այդ քաղաքին մէջ, ու ինչպէս կ'ըսէ ինքն իսկ, բանաստեղծը՝ *«անկարելի էր պատկերներով չի մտածել հոն»*: Եթէ այդպէս է, ահա առաջին գործը Վարուժանին, *Սարսուռները*, լոյս տեսած 1906ին:

Բանաստեղծը կ'ընէ արուեստի իր ուխտը հոն առաջին իսկ էջին մէջ, երբ կ'ըսէ *«Մուսայի»*ն՝

*Թեւերս, ուղիղ դէպի բարձունքըդ վըսեմ՝
Քնարըդ կ'ուզեն, կ'ուզեն քընարդ. երկընցո՛ւր:
Կը տրտիտ մէջս երգերու սաղմն. կը սպասեմ,
Ե՛րբ պիտ' տըրտի անոր ծնուցիչ քու համբոյր:
Երգել կ'ուզեմ. թող սարսըռայ բընտոյթիւնն
Մատերոս տակ, ինչպէս մօր ծիծն հոլանի՝
Մանկան առջի բընագողական դըպչելուն.
Եւ կեանքը թող շըրթունքիս վրայ լուծանի:*

Սարսուռները պատանեկան ներշնչումներու մէկ արձագանգն է. անոր մէջ կը տեսնենք ապագայ բանաստեղծին ամէն յատկութիւնները սաղմնային կամ ծլարձակ երեւոյթով՝ անշուշտ խառնուած երբեմն նոյնիսկ տղայական